# Գնումների Հատուկ Ծանուցում

Երկիրը՝ **Հայաստանի Հանրապետություն**
Ծրագրի անվանումը՝ **"Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիր" (ՈՀԲԾ)**
ՎԶՄԲ փոխառության No.՝ **8267AM**
Պայմանագրի անվանումը՝ **"Քաղցրաշենի ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում" (երեք լոտով)**
Պայմանագիր No.՝ **ISEP/ICB/CW-14/002**

## Մրցութային Առաջարկներ Ներկայացնելու Հրավեր (ՄԱՆՀ)

1. Հայաստանի Հանրապետությունը ֆինանսավորում է ստացել ՀԲ-ից՝ **"Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի"** ծախսերը հոգալու նպատակով և մտադիր է այդ միջոցների մի մասն օգտագործել **"Մագիստրալ խողովակաշարի ՆԿ0+00-ՆԿ90+16.32 հատվածի կառուցում" ISEP/ICB/CW-14/001-1 (Լոտ#1), "Մագիստրալ խողովակաշարի ՆԿ90+16.32-ՆԿ196+60 հատվածի կառուցում" ISEP/ICB/CW-14/001-2 (Լոտ#2) և "Մագիստրալ խողովակաշարի ՆԿ196+60-ՆԿ275+79.89 հատվածի կառուցում" ISEP/ICB/CW-14/001-3 (Լոտ#3)** պայմանագրերի շրջանակներում վճարումներ կատարելու համար: Այս պայմանագրերի վճարումները իրականացվելու են Համաշխարհային բանկի և ՀՀ կառավարության համատեղ ֆինանսավորմամբ: Մրցութային գործընթացը ղեկավարվելու է ՀԲ-ի կանոններով և ընթացակարգերով:

2. **«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն (ՋՏԾԻԳ ՊՀ)** հրավիրում է մրցույթի իրավասու մասնակիցներին փակ մրցութային առաջարկներ ներկայացնել հետևյալ շինարարական աշխատանքներն իրականացնելու համար՝ հողային, մոնոլիտային երկաթբետոնային և մեկուսացման աշխատանքներ; խողովակներ և խողովակային սարքավորումներ; մետաղական կառուցվածքներ և այլն (ըստ ԱԾՑ):

   Շինհրապարակները գտնվում են՝
   Լոտ#1՝ ՀՀ Կոտայքի մարզ, Երևան քաղաքից 45կմ հեռավորության վրա:
   Լոտ#2՝ ՀՀ Արարատի մարզ, Երևան քաղաքից 50-55կմ հեռավորության վրա:
   Լոտ#3՝ ՀՀ Արարատի մարզ, Երևան քաղաքից 60-65կմ հեռավորության վրա:

   Աշխատանքների նախատեսված ավարտման ժամկետները.
   Լոտ#1՝ **18 (տասնութ) ամիս**;
   Լոտ#2 և Լոտ#3՝ **16 (տասնվեց) ամիս**:

   **Որակավորման չափանիշներն են.**

   - **Վերջին 5 (հինգ) տարիների ընթացքում շինարարության գծով նվազագույն միջին տարեկան շրջանառություն՝ հաշվարկված որպես շարունակվող և/կամ ավարտված պայմանագրերով ստացված վճարումների ընդհանուր գումար, բաժանած 5-ի.**
     - Լոտ#1՝ 2,012,851,900.0 ՀՀԴ (կամ 4,200,000.0 ԱՄՆ դոլարին համարժեք),
     - Լոտ#2՝ 2,116,786,000.0 ՀՀԴ (կամ 4,416,870.0 ԱՄՆ դոլարին համարժեք); և
     - Լոտ#3՝ 1,267,336,000.0 ՀՀԴ (կամ 2,644,415.0 ԱՄՆ դոլարին համարժեք):

   - **Մրցույթի մասնակիցը պետք է ցույց տա, որ նա կարող է ստանալ, կամ նրա համար մատչելի են իրացվելի ակտիվներ, չգրավադրված անշարժ գույք, վարկային գծեր կամ այլ ֆինանսական միջոցներ (սակայն ոչ որևէ պայմանագրով ստացված**

**կանխավճար), որոնք բավարար են շինարարության ընթացքում կանխիկ դրամի հետևյալ հոսքերն ապահովելու համար.**

- Լոտ#1՝ 447,300,000.0 ՀՀԴ (կամ 933,334.0 ԱՄՆ դոլարին համարժեք)՝ հանած մրցույթի մասնակցի այլ պարտավորությունները,
- Լոտ#2՝ 470,400,000.0 ՀՀԴ (կամ 981,534.0 ԱՄՆ դոլարին համարժեք)՝ հանած մրցույթի մասնակցի այլ պարտավորությունները,
- Լոտ#3՝ 281,630,000.0 ՀՀԴ (կամ 587,647.0 ԱՄՆ դոլարին համարժեք)՝ հանած մրցույթի մասնակցի այլ պարտավորությունները,

➢ **Յուրաքանչյուր լոտի համար՝ 2010թ. հունվարի 1-ից մինչև մրցութային առաջարկի ներկայացման վերջնաժամկետն ընկած ժամանակահատվածում, մասնակցություն գոհացուցիչ կերպով և էապես ավարտված հիդրոտեխնիկական կառուցվածքի շինարարության առնվազն 1 (մեկ) պայմանագրում՝ որպես գլխավոր կապալառու, համատեղ ձեռնարկումի անդամ, կառավարման կապալառու կամ ենթակապալառու (Լոտ#1, 2 և 3 համար՝ հիդրոտեխնիկական օբյեկտներ - օրինակ՝ ջրառ հանգույց, մայր և երկրորդ կարգի ջրանցքներ, խողովակաշարեր), որի արժեքը լինի.**

- Լոտ#1՝ առնվազն 1,610,280,000.0 ՀՀԴ (կամ 3,360,000.0 ԱՄՆ դոլարին համարժեք);
- Լոտ#2՝ առնվազն 1,505,207,000.0 ՀՀԴ (կամ 3,140,755.0 ԱՄՆ դոլարին համարժեք); և
- Լոտ#3՝ առնվազն 901,216,000.0 ՀՀԴ (կամ 1,880,470.0 ԱՄՆ դոլարին համարժեք):

➢ **Վերոհիշյալ կամ այլ ավարտված պայմանագրերում, կամ այլ իրականացվող պայմանագրերում, 2010թ. հունվարի 1-ից մինչև մրցութային առաջարկի ներկայացման վերջնաժամկետն ընկած ժամանակահատվածում, մասնակցություն հետևյալ հիմնական աշխատանքների նվազագույն ծավալների հաջող կատարմանը՝ որպես Գլխավոր կապալառու, ՀՁ անդամ, Կառավարման Կապալառու կամ Ենթակապալառու.**

Լոտ#1

- Հողային աշխատանքներ – 50,400մ$^3$ (վերը նշված ժամանակահատվածում որևէ մեկ տարվա ընթացքում);
- Հիդրոտեխնիկական բետոն - 1,845մ3(վերը նշված ժամանակահատվածում որևէ մեկ տարվա ընթացքում);
- Խողովակներ և խողովակաշարեր՝ պողպատյա խողովակներ – 7,360մ (վերը նշված ժամանակահատվածում որևէ մեկ տարվա ընթացքում);
- Մեկուսացման աշխատանքներ – 7,263մ (վերը նշված ժամանակահատվածում որևէ մեկ տարվա ընթացքում);

Լոտ#2

- Հողային աշխատանքներ – 56,800մ$^3$ (վերը նշված ժամանակահատվածում որևէ մեկ տարվա ընթացքում);
- Հիդրոտեխնիկական բետոն - 815մ$^3$ (վերը նշված ժամանակահատվածում որևէ մեկ տարվա ընթացքում):
- Խողովակներ և խողովակաշարեր՝ պողպատյա խողովակներ – 710մ, ապակե մանրաթելային խողովակ – 8,151մ (վերը նշված ժամանակահատվածում որևէ մեկ տարվա ընթացքում);

Լոտ#3

- Հողային աշխատանքներ – 40,000մ$^3$ (վերը նշված ժամանակահատվածում որևէ մեկ տարվա ընթացքում);

- Հիդրոտեխնիկական բետոն - 389մ$^3$ (վերը նշված ժամանակահատվածում որևէ մեկ տարվա ընթացքում):
- Խողովակներ և խողովակաշարեր՝ պողպատյա խողովակներ – 240մ, ապակե մանրաթելային խողովակ – 6,353մ (վերը նշված ժամանակահատվածում որևէ մեկ տարվա ընթացքում);

*Պահանջվող հիմնական աշխատանքների ծավալը կարող են ցույց տրվել մեկ կամ մի քանի պայմանագրեր միավորելու միջոցով (առավելագույնը երեք), եթե դրանք իրականացվել են նույն ժամանակահատվածում:*

➢ **Անձնակազմ և սարքավորումներ**

Երկու կամ երեք լոտերին (պայմանագրերին) որակավորված լինելու համար մրցույթի մասնակիցը պետք է բավարարի, համապատասխանաբար, երկու կամ երեք լոտերով (պայմանագրերով) սահմանված պահանջների հանրագումարին (անձնակազմի և սարքավորումների մասով պահանջների մանրամասները բերված են մրցութային փաստաթղթերում):

Իրավասու տեղական կապալառուներին/համատեղ ձեռնարկումներին նախապատվություն **չի տրվելու**:

Մրցույթի մասնակիցները կարող են մրցութային առաջարկներ ներկայացնել մեկ կամ երեք լոտերի (պայմանագրերի) համար, ինչպես սահմանված է մրցութային փաստաթղթերում: Եթե մրցույթի մասնակիցները ցանկանան առաջարկել զեղչեր մեկից ավել պայմանագիր ստանալու/շնորհվելու համար, դա հնարավոր կլինի այն դեպքում, եթե այդ զեղչերը ներառվեն Մրցութային առաջարկի նամակում:

3. Մրցույթը անց է կացվելու **Միջազգային մրցութային սակարկությունների (ՄՄՍ)** ընթացակարգի համաձայն, որը սահմանված է Համաշխարհային Բանկի ուղեցույցներում՝ **"Ապրանքների, աշխատանքների, և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՋՎՄԲ-ի փոխառությունների և ՋՄԸ-ի վարկերի ու դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային բանկի փոխառուների կողմից" (2011թ. հունվար, վերանայված 2014թ. հուլիսին)**: Մրցույթը բաց է մրցութային փաստաթղթերով սահմանված բոլոր իրավասու մասնակիցների համար: Ի լրումն, խնդրում ենք ուշադրություն դարձնել 1.6 և 1.7 կետերի վրա, որով սահմանվում են Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով:

4. Մրցույթի շահագրգիռ իրավասու մասնակիցները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ **«ՋՏԾԻԳ» ՊՀ**-ից **(Համլետ Հարությունյան՝ պլանավորման և նախագծման ճարտարագետ. հեռ:+37441 111-403; էլ.փոստ: hharutyunyan@wsdp.am)** և ուսումնասիրել մրցութային փաստաթղթերը ներքո նշյալ հասցեով՝ բոլոր աշխատանքային օրերին ժամը **10:00-ից մինչև 17:00.**

5. Շահագրգիռ մասնակիցները կարող են ձեռք բերել մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթը **անգլերեն լեզվով**, ներկայացնելով գրավոր դիմում ներքոհիշյալ հասցեով և վճարելով **150 ԱՄՆ դոլար** կամ **70,000 ՀՀ դրամ** չհատուցվող գումար: Նշված գումարի վճարման եղանակն է բանկային փոխանցումը հետևյալ հաշվին.

**Շահառու. ՀՀ ֆինանսների նախարարություն/կենտրոնական գանձապետարան Հաշվի համարներ. 900000906074 ($ԱՄՆ) կամ 900000906082 (ՀՀ դրամ)**

Մրցութային փաստաթղթերը կառաքվեն օդային փոստով (Երևանից դուրս առաքելու դեպքում) կամ առձեռն կհանձնվեն մրցույթի մասնակցի ներկայացուցչին: Երևանից դուրս

առաքելու պարագայում տեղափոխման համար կգանձվի լրացուցիչ **150 ԱՄՆ դոլար** կամ **70,000 ՀՀ դրամ**: Բացի դրանից, մրցութային փաստաթղթերը կտրամադրվեն մրցույթի մասնակիցներին նաև էլեկտրոնային եղանակով: Տպված և էլեկտրոնային տարբերակների միջև հակասությունների դեպքում տպված տարբերակը գերակայում է:

6. Մրցութային առաջարկները պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով **2015թ. սեպտեմբերի 29-ին ժամը 16:00-ին (Երևանի ժամանակով)** կամ ավելի վաղ: Էլեկտրոնային եղանակով մրցութային առաջարկների ներկայացում **չի թույլատրվում**: Ուշացված մրցութային առաջարկները կմերժվեն: Մրցութային առաջարկները կբացվեն բացմանը մասնակցելու ցանկություն ունեցող մասնակիցների ներկայացուցիչների ներկայությամբ **2015թ. սեպտեմբերի 29-ին ժամը 16:00-ին (Երևանի ժամանակով) ներքո նշված հասցեում**:

7. Մրցութային առաջարկները պետք է ուղեկցվեն **Մրցութային առաջարկի երաշխիքով (բանկային երաշխիք)**, որի գումարն է.

- Լոտ#1՝ 40,257,000.0 ՀՀԴ կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով՝ մրցութային երաշխիքի թողարկման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի փոխարկման կուրսով;
- Լոտ#2՝ 37,632,000.0 ՀՀԴ կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով՝ մրցութային երաշխիքի թողարկման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի փոխարկման կուրսով;
- Լոտ#3՝ 22,530,000.0 ՀՀԴ կամ նրա համարժեքը ազատ փոխարկելի արժույթով՝ մրցութային երաշխիքի թողարկման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի փոխարկման կուրսով:

8. Վերևում հիշատակվող հասցեն է.

**«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ**
**Պրն. Ֆելքս Մելիքյան, տնօրեն**
Պրն. Համլետ Հարությունյան, պլանավորման և նախագծման ճարտարագետ
Պրն. Մարտին Չարյան, գնումների մասնագետ
**Հայաստանի Հանրապետություն, Երևան 0033, Բաղրամյան փ. 75/44**
**Հեռ՝** (+37410) 277-943 (ընդունարան); 266-058 (գնումների բաժին)
**Էլ. փոստ՝** fmelikyan@wsdp.am; hharutyunyan@wsdp.am; mcharyan@wsdp.am;